ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ

ՆԱԽԱՐԱՐԻ

ՀՐԱՄԱՆԸ

04.02.2014 թվականի N 12-Ն

ՕԳՏԱԿԱՐ ՀԱՆԱԾՈՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԸՆԴԵՐՔԻ ԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Ընդերքի մասին ՀՀ օրենսգրքի 20-րդ հոդվածի 1-ին մասի, 40-րդ հոդվածի, 41-րդ հոդվածի, 42-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներով, հիմք ընդունելով օրենսգրքի 38-րդ հոդվածով սահմանված և ներկայացված փաստաթղթերի ու տեղեկատվության՝ օրենսդրությանը համապատասխանությունը, բնության և շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման դրական եզրակացությունը՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. «ՋՈՒԼԻ» ՍՊ ընկերությանը՝ երեք տարի ժամկետով տրամադրել օգտակար հանածոների արդյունահանման նպատակով երկրաբանական ուսումնասիրության թիվ ԵՀԹ-29/192 թույլտվությունը /այսուհետ՝ թույլտվություն/, ՀՀ Վայոց Ձորի մարզի Ելփինի պղինձ-մոլիբդենային հանքերևակման՝ 1.X=4411100 Y=8511500; 2.X=4411100 Y=8506500; 3.X=4414000 Y=8505600; 4.X=4414000 Y=850100; 5.X= 4416500 Y=8501000; 6.X=4416500 Y=8514000; 7.X=4409000 Y=8514000; 8.X=4409000 Y=8511500 կոորդինատներով (տրված՝ 1942թ. Բալթիան համակարգով) սահմանափակված 6000 հա տարածքում երկրաբանական ուսումնասիրության աշխատանքներ կատարելու համար:

2. *Ընդերքի տրամադրման գործակալության պետին՝*

1) 2 օրվա ընթացքում նախապատրաստել հրամանի 1-ին կետում նշված տեղամասի օգտակար հանածոների արդյունահանման նպատակով ընդերքի երկրաբանական ուսումնասիրության պայմանագիրը /այսուհետ՝ պայմանագիր/ և ծանուցել ընկերությանը՝

սույն հրամանը ստանալուց հետո 10-օրյա ժամկետում պայմանագիրն իր կողմից վավերացնելու մասին,

2) ընկերության կողմից պայմանագիրը վավերացնելուց հետո, 10 օրվա ընթացքում, ընդերքօգտագործման իրավունքի տրամադրման պետական տուրքի վճարման անդորրագրի ներկայացումից անմիջապես հետո, ընկերությանը տրամադրել օգտակար հանածոների արդյունահանման նպատակով երկրաբանական ուսումնասիրության իրավունքը հավաստող փաստաթղթերի /թույլտվություն, լիազոր մարմնի հետ համաձայնեցված աշխատանքային ծրագիր, պայմանագիր/ փաթեթը.
3) ծանուցել ընկերությանը, որ սահմանված ժամկետներում պայմանագիրը չվավերացնելու և ընդերքօգտագործման իրավունքի փաթեթը չստանալու դեպքում, օգտակար հանածոների արդյունահանման նպատակով ընդերքի երկրաբանական ուսումնասիրության իրավունք հայցելու դիմումը բավարարելու վերաբերյալ սույն հրամանը կհամարվի ուժը կորցրած.

4) ապահովել համապատասխան գրառումների կատարումը երկրաբանական ուսումնասիրությունների իրավունքի հաշվառման գրանցամատյանում:

3. <Հանրապետական երկրաբանական ֆոնդ> ՊՈԱԿ-ի տնօրենին - ապահովել ֆոնդային փաստաթղթերում՝ համապատասխան գրառումների կատարումը.

4. Սույն հրամանը կարող է բողոքարկվել վարչական կարգով ուժի մեջ մտնելուց հետո 6-ամսյա ժամկետում կամ դատարան՝ ուժի մեջ մտնելուց հետո 2-ամսյա ժամկետում:

5. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել՝ ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարության աշխատակազմի ղեկավարին:

Ա.ՄՈՎՍԻՍՅԱՆ

Ձև N 1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՕԳՏԱԿԱՐ ՀԱՆԱԾՈՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ ԵՀԹ-29/192

Տալու տարեթիվը, ամիսը, ամսաթիվը

3 տարի (երեք տարի)

Գործողության ժամկետը

«ՋՈՒԼԻ» ՍՊԸ

Ընդերքօգտագործողի անվանումը և գտնվելու վայրը

ՀՀ Արարատի մարզ, գ. Մխչյան

Ընդերքօգտագործողի պետական գրանցման վկայականի համարը և ամսաթիվը

03 Ա 855979 13.09.2012թ.

պղինձ-մոլիբդեն

Օգտակար հանածոի(հանածոների) անվանումը

Ընդերքի տեղամասի ծայրակետերի կոորդինատները և մակերեսը 1.X=4411100 Y=8511500; 2.X=4411100 Y=8506500; 3.X=4414000 Y=8505600; 4.X=4414000 Y=850100; 5.X= 4416500 Y=8501000; 6.X=4416500 Y=8514000; 7.X=4409000 Y=8514000; 8.X=4409000 Y=8511500

Տեղամասի մակերեսը կազմում է՝ 6000 հա.

Երկրաբանական ուսումնասիրության նպատակը

Կից ներկայացված են՝

ՀՀ Վայոց Ձորի մարզի Ելփինի պղինձ-մոլիբդենային հանքերևակումում երկրաբանական ուսումնասիրություն

Երկրաբանական ուսումնասիրության ծրագիրը

(աշխատանքային ծրագրի անվանումը)

Պ-192

Երկրաբանական ուսումնասիրության պայմանագիրը

(համարը, կնքման տարին, ամիսը, ամսաթիվը)

ՀՀ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

ԱՐՄԵՆ ՄՈՎՍԻՍՅԱՆ

Կ.Տ.

tuyltv[1]